

ՄԵՐ ԱՆԿԻՒՆԷՆ

Կլիմայի փոփոխութիւնը Մարդկութեան Սպառնացող Վտանգ

Այս օրերուն Սկովստիոյ Կլիմայի փոփոխութեան Գլխավոր Կոմիտեի Կլիմայի փոփոխութեան Գլխավոր Կոմիտեի Կարգադրող Կազմակերպութեան հովանաւորած միջազգային համաժողովը, որուն կը մասնակցին աշխարհի տարբեր երկիրներու ղեկավարներ եւ ներկայացուցիչներ:

2015 թուականի Դեկտեմբերին, 196 երկիրներ Ֆրանսայի մայրաքաղաք Փարիզի մէջ ստորագրեցին միջազգային առաջին պայմանագիրը՝ միացեալ ուժերով պայքարելու համար կլիմայի փոփոխութեան եւ երկրագունդի ջերմութիւնը 2 աստիճանէն վար իջեցնելու նպատակաւ: Այս ուղղութեամբ պայմանագիրը ստորագրող երկիրները խոստացան նուազեցնել թունաւոր նիւթերու արտադրութիւնը ու այդ ընթացքին համար ապահովելու ուժանիւթերու այլընտրանքային միջոցներուն եւ ելեքտրական հոսանքի արտադրելու համար օգտագործել արեգակային կամ արեւային միջոցներ՝ փոխանակածով, որ կ'ապականէ մթնոլորտը ու կը վնասէ մարդու առողջութեան եւ կենսամակարդակին:

Մեծ թիւով գիտնականներ համակարծիք են, որ կլիմայի փոփոխութեան պատճառաւ ու երկրագունդի տաքացման հետեւանքով կլիման դարձած է անելի անկանխատեսելի, որոտամորիկները անելի ուժեղ, ծմեռնային եղանակը անելի ցուրտ, իսկ ամառները՝ անելի տաք: Այս է պատճառը որ յաճախ ականատես կ'ըլլանք՝ տարբեր երկիրներու մէջ անտառային հսկայ հրդեհներու եւ մարդկային ու նիւթական վնասներու: Երաշտը դարձած է անելի սաստիկ, իսկ կը բարձրանայ ովկիանոսներու մակարդակը՝ ծովեզերեայ հողերը անցնելով ջրուի տակ:

Ինչպէս ամեն հարցի մէջ, այս պարագային եւս կան կլիմայի փոփոխութիւնը ուրացողներ, որոնց կարծիքով ահագանգ հնչեցնողները չափազանցութիւններու կ'երթան:

Կլիմայի մէջ նախագահ՝ Ծօ Պայտլըն ներողութիւն խնդրեց իր նախորդի՝ Տոնալտ Թրամփի Փարիզի պայմանագիրէն դուրս գալու որոշումին համար եւ խոստացաւ, որ Միացեալ Նահանգները այս հարցով դարձեալ պիտի ստանձնեն առաջնորդողի իր դերը:

Կասկած չկայ որ, կլիմայի փոփոխութիւնը իրականութիւն է եւ իւրաքանչիւր երկիր եւ անհատ ունի իր կատարելիք դերը՝ կլիմայի փոփոխութեան պատճառաւ մարդկութեան սպառնացող վտանգին դէմ պայքարելու ուղղութեամբ, որպէսզի յառաջիկայ սերունդները եւս կարողանան ապրիլ այս գեղեցիկ ու հրաշալի երկրագունդին վրայ՝ վայելելով անոր բոլոր բարիքները:

«ՄԱՍԻՍ»

Միրզոյեան Եւ Լաւրով Քննարկած Եւ Տարածաշրջանային Ձարգացումները



Ռուսաստանի արտաքին գործոց նախարար՝ Սերկէյ Լաւրով

ՀՀ Արտաքին գործոց նախարար՝ Արարատ Միրզոյեան ու ՌԴ արտաքին գործոց նախարար՝ Սերկէյ Լաւրով Նոյեմբեր 1-ին հեռախօսազրոյց ունեցած են: Այս մասին յայտնած է ՌԴ ԱԳՆ պաշտօնական կայքը:

Նախարարները քննարկած են Հայաստանի, Ատրպէյջանի եւ Ռուսաստանի ղեկավարներու 2020 թուականի Նոյեմբեր 9-ի եւ 2021 թուականի Յունուար 11-ի պայմանաւորուածութիւններու կատարման ընթացքին վերաբերող հարցեր՝ հաշուի առնելով այն, որ կը լրանայ լիակատար գինադադարին

Հայաստանի Արտաքին գործոց նախարար՝ Արարատ Միրզոյեան

ուղղուած նոյեմբերեան եռակողմ փաստաթուղթի մէջ տարին: Յատուկ ուշադրութիւն դարձուած է մարդասիրական՝ պահուող անձեռու վերադարձի, ակնհայտ տարածքներու քարտէզներու տրամադրման, մշակութային եւ կրօնական ժառանգութեան պահպանման հրատապ խնդիրներու լուծման:

Երկու երկիրներու Արտաքին գործոց ղեկավարները «Ճշգրտած են ժամերը» հայ-ատրպէյջանական սահմանին լարուածութեան վերացման, Հարաւային Կովկասի փոքր

Շար.ը էջ 4

ՍԴՅԿ-ի Հանդիպումը Արցախի Պետական Նախարար Արտակ Բեգլարեանի Հետ



Չախէն Աջ՝ Միիրան Խաչատուրեան, Վազգէն Խոտանեան, պետական նախարար Արտակ Բեգլարեան եւ Վարդան Քորոյլեան

Հինգշաբթի, Հոկտեմբեր 28-ին Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Արեւմտեան Ամերիկայի Վարիչ Մարմինը ներկայացնող պատուիրակութիւն մը հանդիպում ունեցաւ Արցախի պետական նախարար (վարչապետ) Արտակ Բեգլարեանի հետ, որ Միացեալ Նահանգներ կ'այցելէ Հայ Աւետարանչական Ընկերակցութեան

հրաւերով: Հանդիպումի ընթացքին Պր. Բեգլարեան ներկայացուց Արցախի մէջ տիրող ներկայ Ապահովական, տնտեսական, առողջապահական եւ բնակարանային իրավիճակը, լաւատեսութիւն յայտնելով Արցախահայութեան ապագայի նկատմամբ:

Շար.ը էջ 5

Փաշինեան Հանդիպում Ունեցած Է Հայ Կաթողիկէ Եկեղեցւոյ Նորընտիր Առաջնորդին Հետ



Ռաֆայէլ Արք. Մինասեան եւ Վարչապետ՝ Նիկոլ Փաշինեան

Վարչապետ՝ Նիկոլ Փաշինեան այսօր՝ Հոկտեմբեր 29-ին ընդունած է Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Հայոց Կաթողիկոս Պատրիարք՝ Արհ. Տ. Ռաֆայէլ Արք. Մինասեանը:

Վարչապետը անգամ մը եւս շնորհակտորած է Ամենապատիւ եւ Գերերջանիկ Տէր Ռաֆայէլ Պետրոսին՝ Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Հայոց 21-րդ Կաթողիկոս Պատրիարք ընտրուելու կապակցութեամբ:

Չրուցակիցները մտքեր փոխանակած են հայապահպանութեան, Հայաստան-Արցախ-Սփիւռք միասնութեան, պետութիւն-եկեղեցի կապերու ամրապնդման շուրջ, կարեւորած աշխարհիկ եւ հոգեւոր իշխանութեան համագործակցութիւնը այս ուղղութեամբ: Վարչապետը ընդգծած է, որ Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը մեծ դեր ունի մեր ժողովուրդի հոգեւոր արժէքներու ամրապնդման, ազգային ինքնութեան, մշակութային ժառանգութեան պահպանման գործով, եւ ՀՀ կառավարութիւնը կը շարունակէ իր նպաստը բերել այդ գործին:

Անգարա Պատրաստ Է Ընդառաջել Երեւանին, Եթէ Պաքու Գոհ Ըլլայ. Չաւուշօղլու

Թուրքիան Հայաստանի հետ յարաբերութիւններու կարգաւորման հարցով վերահաստատած է իր մօտեցումը, որ պատրաստ են ընդառաջել Երեւանին եկած դրական ազդակներուն, բայց իրենց քայլերը կը համաձայնեցնեն նաեւ Պաքուի հետ:

Նախագահ՝ Թայյպ էրտողանի հետ Ֆիզուլի եւ Չանգէլան կատարած այցելութեանն յետոյ Թուրքիոյ Արտաքին Գործոց նախարար՝ Մեւլուտ Չաւուշօղլուն CNN Turk-

Շար.ը էջ 5

ԼՈՒՐԵՐ

Հաւաքագրուած Հարկային Եկամուտները Աճած ԵՆ 12.7 Տոկոսով. ՊԵԿ

Հայաստանի 2021-ի Յունուար-Հոկտեմբերին հաւաքագրուած հարկային եկամուտները նախորդ տարուայ նոյն ժամանակի նկատմամբ աճած են 12.7 տոկոսով, ըսած է ՀՀ Պետական Եկամուտներու Կոմիտէի (ՊԵԿ) նախագահ՝ Ռուստամ Բաղասեան ԱԺ տնտեսական ու ֆինանսավարկային եւ պիւտճէտային հարցերու մշտական յանձնաժողովներու համատեղ նիստին կայացած պիւտճէտային քննարկումներու ժամանակ:

«2021-ի Յունուար-Հոկտեմբերին հարկային եկամուտների բացարձակ աճը 2020-ի նոյն ժամանակի համեմատ կազմում է շուրջ 144 միլիարդ, 12.7 տոկոսով աւելի հարկ է հաւաքագրուել», - ըսաւ Բաղասեան:

Անդրադառնալով գրանցուած աշխատատեղերուն՝ ՊԵԿ-ի նախագահը ըսաւ, որ Յունուար-Մեպտեմբերին հարկման հիմք ունեցող անձերու թուաքանակը կը կազմէ 651 հազար 141: «Սա պատմութեան մէջ բացարձակ մրցանիշ է: Երբեք այսքան աշխոյժ եկամտա-



Պետական Եկամուտներու Կոմիտէի նախագահ՝ Ռուստամ Բաղասեան

յին հարկ վճարող անձ չենք ունեցել: Անձի հաշուարկով միջին աշխատավարձը 223 հազար 137 է, ընդհանուր հարկման հիմքը կազմած է 145.294 միլիարդ», - նշեց Բաղասեան:

Երեք Միլիոն Տոլար Կաշառք Ստանալու Մէջ Մեղադրուող Ռոպերթ Քոչարեանը Չէ Ներկայացած Դատական Նիստին

Երեւանի ընդհանուր իրաւասութեան դատարանէն ներս շարունակուեցաւ Ռոպերթ Քոչարեանի եւ Արմէն Գէորգեանի՝ կաշառքի գործով հերթական դատական նիստը:

Նիստին ներկայ չէին Արմէն Գէորգեանի պաշտպան Քոչուպանը՝ այլ դատական նիստ ըլլալու պատճառով եւ Ռոպերթ Քոչարեանը, որ, ըստ Քոչարեանի պաշտպան Հայկ Ալումեանին, «Քորոնա» ժահրի հետազօտութիւն կատարած է, քանի որ Քոչարեանի հարազատներէն մէկուն մօտ յայտնաբերուած է «Քորոնա» ժահր, իսկ Ռոպերթ Քոչարեանը շփումներ ունեցած է այդ հարազատին հետ:

Դատաւոր Աննա Տանիպեկեանը, հաշուի առնելով ստեղծուած իրավիճակը, յետաձգեց դատական նիստը մինչեւ Նոյեմբեր 9-ը:

Յիշեցնենք, որ Ռոպերթ Քոչարեանին այս գործով առանձնապէս խոշոր չափերու կաշառքի մեղադրանք ներկայացուած է, իսկ նախկին փոխ վարչապետ Արմէն Գէորգեանին՝ փողերու լուսցման:

Յիշեցնենք նաեւ, որ համաձայն դատական տեղեկատուական համակարգին մէջ առկայ մեղադրական համառօտ եզրակացութեան, Ռոպերթ Քոչարեանը գրաւելով ՀՀ Նախագահի պաշտօնը իր պաշտօնէական դիրքը օգտագործելով «Թի

էս էս Սի Արմենիա» ՍՊ ընկերութեան միակ մասնակից եւ տնօրէն Սիլվա Համբարձումեանի օգտին գործողութիւններ կատարելուն եւ գործարքը չխօչելու համար, 2008 թուականի Փետրուարին եւ Մայիսին Սամուէլ Մայրապետեանի օժանդակութեամբ անկէ ստացած է առանձնապէս խոշոր չափերով՝ 927.000.000 ՀՀ դրամին համարժէք 3.000.000 ԱՄՆ տոլար կաշառք:

Արմէն Գէորգեանին մեղադրանք առաջադրուած է այն բանի համար, որ հանդիսանալով պետական մարմնին մէջ տեւական կազմակերպչական-տնօրինչական գործառույթներ կատարող պաշտօնատար անձ, «Թի էս էս Սի Արմենիա» ՍՊ ընկերութեան միակ մասնակից ու տնօրէն Սիլվա Համբարձումեանի օգտին գործողութիւններ կատարելուն նպաստելու նպատակով 2008-ի Ապրիլին Սամուէլ Մայրապետեանի օժանդակութեամբ անկէ ստացած է առանձնապէս խոշոր չափերով՝ 309.000.000 ՀՀ դրամին համարժէք 1.000.000 ԱՄՆ տոլար կաշառք, ինչպէս նաեւ նոյն ժամանակ թաքցնելով ու խեղաթիւրելով նշուած գումարի իրական բնույթն ու ծագումը՝ օրինականացուցած է առանձնապէս խոշոր չափերով յանցաւոր ճանապարհով ստացուած եկամուտները:


Այն, Ինչ Մերն Է, Այնտեղ Օտար Ձիւնուած Ուժեր Չեն Կրնար Լինել. Անդրանիկ Քոչարեան

Աժ-ի ճեպագրոյցներու ժամանակ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցութեան պատգամաւոր՝ Անդրանիկ Քոչարեան անդրադարձաւ ՌԴ նախագահ՝ Վլատիմիր Փութինի յայտարարութիւններուն, որ ՌԴ ԶՈՒ գլխաւոր շտաբը կը գտնուին քարտէզներ:

«Մի մոռացէք, որ մենք՝ 15 հանրապետութիւնները, եղել ենք մէկ ընդհանուր անվտանգային համակարգում եւ ունեցել ենք միասնական ռազմական քարտէզներ: Եւ այդ քարտէզներով են իրականացուել համապատասխան գործընթացները, որոնք վերաբերում են Սովետական Միութեան զինուած ուժերին: Բնականաբար, այն, ինչի մասին խօսում էք, այդ քարտէզներից ունի նաեւ ՀՀ-ն», - ըսաւ Քոչարեան:

Հարցին, թէ ըստ այդ քարտէզներուն, ո՞ր տարածքներէն դուրս պիտի գան ատրպէյճանական ուժերը, Քոչարեան պատասխանեց. «Այն, ինչ մերն է, այնտեղ օտար զինուած ուժեր չեն կարող լինել»:

Արտախորհրդարանական Ուժերը Մաս Պիտի Կազմեն 44-օրեայ Պատերազմի Հանգամանքները Քննող Յանձնաժողովին



Վարչապետ Փաշինեան եւ արտախորհրդարանական քաղաքական ուժերու ներկայացուցիչները հանդիպման ընթացքին

Վարչապետ Նիկոլ Փաշինեան մասնակցած է արտախորհրդարանական քաղաքական ուժերու հետ համագործակցութեան խորհրդակցական ժողովի հերթական նիստին:

Նիստին ներկայ գտնուած են «Հանրապետութիւն» կուսակցութեան նախագահ Արամ Սարգսեանը, «Ազատական կուսակցութեան առաջնորդ՝ Սամուէլ Բաբայանը, «Ալեանս» առաջադիմական կեդրոնամէտ կուսակցութեան ներկայացուցիչ՝ Տիգրան Արզաքանցեանը, «Արդար Հայաստան» կուսակցութեան ղեկավար՝ Նորայր Նորիկեանը, «Ինքնիշխան Հայաստան» կուսակցութեան ղեկավար՝ Դաւիթ Սանասարեանը, Հայաստանի եւրոպական կուսակցութեան ղեկավար՝ Տիգրան Խզմալեանը, Հայաստանի Քրիստոնեայ-ժողովրդավարական կուսակցութեան նախագահ՝ Լեւոն Շիրինեանը, «Միասնական հայրենիք» կուսակցութեան նախագահ՝ Մհեր Տէրտէրեանը, Պահպանողական կուսակցութեան ղեկավար՝ Միքայէլ Հայրապետեանը, Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան ատենապետ՝ Սեդրակ Աճէմեանը:

Նիկոլ Փաշինեան ողջունած է ժողովի մասնակիցները եւ նշած.

«Սա մեր այս ձեւաչափի չորրորդ հանդիպումն է, եւ կարծում եմ, որ այս պահի դրութեամբ կարող ենք ասել, որ այն՝ որպէս խօսակցութեան հարթակ, կարեւորում ենք: Եւ այն, որ այսօր այստեղ ներկայ ենք, թերեւս դրա վկայութիւնն է, եւ մեր առաջիկայ անելիքը թերեւս պէտք է լինի այս հարթակն աւելի արդիւնաւէտ դարձնելը եւ իր գործունէութիւնը յստակ արդիւնքներով պատկելի: Ինչքանով դա կը յաջողուի՝ մեզինքն է կախուած: Ի հարկէ, ոչ մի երաշխիք չկայ, բայց մեր նպատակադրումը հենց դա է:

Այս պահի դրութեամբ մենք ունենք մի շատ յստակ որոշում, որ այս ձեւաչափի երեք ներկայացուցիչներ պիտի ներգրաւուած լինեն 44-օրեայ պատերազմի հանգամանքներն ուսումնասիրող քննիչ յանձնաժողովում» - նշած է նաեւ վարչապետ Փաշինեան՝ շեշտելով, որ ներկայիս լուծումներ կը փնտռուին տէ իւրէ այդ հարցը կազմակերպելու համար:

Նիկոլ Փաշինեան աւելցուցած է, որ քննիչ յանձնաժողովի աշխատանքները կը մեկնարկեն միայն նախապատրաստական աշխատանքներու իրագործումէն ետք:

Այնուհետեւ նիստի մասնակիցները անցած են օրակարգային հարցերու քննարկման:

Գիւմրիի Քաղաքապետ Ընտրուեցաւ Վարդգէս Սամսոնեան

Նորընտիր աւագանին Նոյեմբեր 1-ին բաց քուէարկութեամբ՝ 24 կողմ, 8 դէմ ձայներով Գիւմրիի 4-րդ քաղաքապետ ընտրեց «Բալասանեան դաշինքի» ընտրացուցակը գլխաւորող Վարդգէս Սամսոնեանը:

Սամսոնեան քաղաքապետի միակ թեկնածուն էր, թէեւ օրէնքով աւագանի անցած միւս չորս կուսակցութիւններն ալ կրնային առաջադրել: Սակայն ընդգիծադիր 3 ուժերը՝ «Զարթօնքը», Հանրապետականը եւ «Ապրելու երկիրը» հրաժարեցան, իսկ «Քաղաքացիական պայմանագիրն» ալ 2 օր առաջ ստորագրուած համաձայնագրով արդէն յայտարարած էր, որ կողմ է քուէարկելու Վարդգէս Սամսոնեանի թեկնածութեան:

30-ամեայ Սամսոնեանը մինչեւ այս գրաւած էր քաղաքապետարանի ենթակայութեամբ գործող «Քոմունալ ծառայութիւն» հա-

մայնային պիւտճէտային հիմնարկը, ան Գիւմրիին ինը տարի ղեկավարած Սամուէլ Բալասանեանի ազգականն է:

Նորընտիր քաղաքապետը այսօր աւագանիին ներկայացուց Գիւմրիի զարգացման իր տեսլականը. «Կարծում եմ՝ իմ երազանքները շատ չեն տարբերուում մեր միւս համաքաղաքացիների երազանքներից՝ բարեկարգ, կանաչապատ, հանգիստ, համախմբուած, մաքուր, զարգացող եւ ապագային վստահ նայող քաղաք: Շատ աւելի կարեւոր են ճանապարհները եւ միջոցների ընտրութիւնն այս երազանքներին հասնելու համար: Խնդիրների այն համախումբը, որն ունի մեր Գիւմրիին, մեզ թոյլ չի տալիս այլընտրանք, քան միասնական եւ թափանցիկ, համերաշխ միտուորսուած բոլոր կարող ուժերի օգտագործմամբ քաղաքի զարգացման ընթացքն էլ աւելի արագացնելը»:

ԼՈՒՐԵՐ

Նախագահ Արմեն Սարգսեանի Պատմական Այցելութիւնը Սէուտական Արաբիա



Ռիատի օդակայանը Հայաստանի Գախագահին դիմաւորել երկրի արտաքին գործոց պետական Գախարար՝ Ատէլ Ալ Ճուպէրը

Հայաստանի Հանրապետութեան նախագահ՝ Արմեն Սարգսեան պատմական այցելութիւն կատարեց Սէուտական Արաբիա:

Հայաստան անկախութենէն ի վեր դիւանագիտական յարաբերութիւններ չունի Սէուտական Արաբիոյ հետ եւ Հայաստանէն որեւէ պաշտօնեայ երբեւիցէ չէ այցելած այդ երկիր, նախագահի գրասենեակը Արմեն Սարգսեանի այցը պատմական քայլ որակած է:

«Այս աննախադէպ իրադարձութիւնը միանշանակ շրջադարձային է Հայաստանի միջազգային յարաբերութիւններում», - յայտնած է նախագահականը:

Սէուտական Արաբիոյ մայրաքաղաք՝ Ռիատի օդակայանը Հայաստանի նախագահին դիմաւորած է այդ երկրի արտաքին գործոց պետական նախարար՝ Ատէլ Ալ Ճուպէրը, իսկ պաշտօնական արարողակարգի համաձայն՝ օդակայանը բարձրացուած է Հայաստանի պետական դրօշակը:

Մայրաքաղաք Ռիատի մէջ Սարգսեան մասնակցած է Ապագայ Ներդրումներու Նախաձեռնութեան համաժողովին, որուն առկայ քննարկումներ ունեցած է Սէուտական Արաբիոյ գահաժառանգ՝ իշխան Ն Մուհամմէտ Պին Սալմանի հետ:

Ապա, ՀՀ նախագահը աշխատանքային այցով ուղեւորուած է Արաբական Միացեալ Էմիրութիւններ:

Ատրպէյճան Նպատակ Դրած Է Մինչեւ 2030-ը Արցախի ԼՂԻՄ-ի Տարածքին Սեջ Չաւասարեցնել Հայերու Եւ Ազերիներու Թիւը

Ատրպէյճանի նպատակն է՝ Արցախի ԼՂԻՄ-ի գրաւեալ տարածքներուն՝ Շուշիի, Հադրութի եւ գրաւուած գիւղերուն մէջ մինչեւ 2030 թուականը բնակող ատրպէյճանցիներու թիւը հասցնել 40-45 հազարի: Փոխարէնը սադրանքներով, կրակոցներով եւ ահաբեկող յայտարարութիւններով վախ ներշնչելու միջոցով նուազեցնել բուն Արցախ ապրող հայերու թիւը՝ մինչեւ 40-45 հազարի: Այս մասին Երեւանի մամուլի ակումբի կազմակերպած սեմինարի ժամանակ ըսաւ ռազմական փորձագէտ Բենիամին Պողոսեան: Ըստ փորձագէտին՝ իր հետ գրոյցի ընթացքին ասիկա չեն թաքցուցած ատրպէյճանցի գործընկերները:

Փորձագէտի խօսքով՝ Ատր-

պէյճանի այդ ծրագիրը ապագայ հանրաքուէի արդիւնքներուն համար է: Ըսած է, թէ չնայած Ատրպէյճանը կը յայտարարէ, որ իրեն համար Արցախի հարցը լուծուած է, շատ լաւ կը հասկնայ, որ Արցախի կարգավիճակի հարցը լուծման կը սպասէ ու ինքը կանգնած է այդ խնդրի առջեւ:

Այդ է պատճառը, որ այսօր աշխուժօրէն կը կառուցապատէ գրաւեալ տարածքներուն մէջ՝ գանդա ատրպէյճանցիներով բնակեցնելու համար:

Պողոսեանի խօսքով՝ ցաւօք, այսօր Արցախէն արտագաղթ կայ, եւ այդ պայմանաւորուած է անվտանգութեան նկատառումներով, քանի որ ռուս խաղաղապահներու յոյսին մնալը այնքան ալ ապահով չէ արցախցիներուն համար:

Ըստ Երտողանի՝ Ալիեւը Զրուցած Է Փաշինեանի Հետ

Թուրքիոյ նախագահ՝ Ռէճէպ Թայյէպ Էրտողան չոքմէն (G20-ի գագաթնաժողովէն) Թուրքիա վերադառնալու ճանապարհին օդանաւին մէջ ներկայացուցած է գաղաթնաժողովի ընթացքին տեղի ունեցած հանդիպումներու մանրամասնութիւնները եւ պատասխանած լրագրողներու հարցերուն: Խօսելով Ֆրանսայի նախագահ՝ Էմմանուէլ Մաքրոնի հետ հանդիպման մասին՝ Էրտողան նշած է, որ քննարկած են քանի մը հարց, անոնց կարգին Հարաւային Կովկասի հարցը: Ան Մաքրոնին յայտնած է, որ Հարաւային Կովկասի մէջ հիմա դրական քայլեր կը կատար-

ուին, եւ Ատրպէյճանի նախագահ՝ Իլհամ Ալիեւը վճռական տրամադրուած է՝ շարունակելու այդ դրական քայլերը:

Թուրքիոյ նախագահը նաեւ յայտնած է, թէ իբր Ալիեւը Փաշինեանի հետ ունեցած է խօսակցութիւն, որու ընթացքին օրակարգ բերուած է տարածաշրջանի մէջ Եւրոյի հարթակ ստեղծելու հարցը: «Ռուսաստանը, Ատրպէյճանը, Թուրքիան, Իրանը, Վրաստանը եւ անոնց կողքին նաեւ Հայաստանը, եթէ բոլորը ընդունին, ապա իսկապէս ստեղծած կը լինենք խաղաղութեան մէկ հարթակ», - եզրափակած է Էրտողան:

Սամուէլ Բաբայեանի Կարծիքով՝ Պատերազմի Վտանգ Չկայ



Արցախի Անվտանգութեան խորհուրդի Գախկին քարտուղար՝ Սամուէլ Բաբայեան «Ֆէյսպուքեան ասուլիսի» ընթացքին

Արցախի Անվտանգութեան խորհուրդի նախկին քարտուղար՝ Սամուէլ Բաբայեան նոր պատերազմի հաւանականութիւն չի տեսներ, յամենայն դէպս ապագայ 4 տարուայ ընթացքին, քանի դեռ ռուս խաղաղապահները տեղակայուած են Լեռնային Ղարաբաղ: Ճանապարհներու հաղորդակցութիւն նոյնպէս, ըստ անոր, առաջիկայ 4-5 տարիներուն պիտի չըլլայ:

Սամուէլ Բաբայեան «Ազատութիւն»-ի «Ֆէյսպուքեան ասուլիսի» հիւրն էր:

Հարցին, որ պատերազմի նոր հաւանականութիւն կը տեսնէ՞, Արցախի Անվտանգութեան խորհուրդի նախկին քարտուղարը պատասխանեց. «Ես համարում եմ, որ պատերազմի վտանգ չկայ, քանի որ Ռուսաստանը դեռ 4 տարի Ղարաբաղում է լինելու, եւ որեւէ մի պատերազմ նոյնն է, թէ Ռուսաստանի դէմ պատերազմ սկսեն, Ատրպէյճանը դա լաւ գիտակցում է:

Վստահ եղէ՞ք՝ որեւիցէ պատերազմի վտանգ չկայ մօտակայ 4 տարին, նրանից յետոյ մենք պէտք է հասցնենք ուժեղ բանակ ունենալ եւ աջակցենք ամէն ձեւ, որ Ռուսաստանն այդ մասնաթղջ վերցնի Արցախում»:

Միջանցքի տրամադրումը կամ հաղորդակցութիւններու բացումը տնտեսական աճ պիտի բերէ, նշեց Սամուէլ Բաբայեանը՝ միեւնոյն ժամանակ պնդելով, որ այդ ինքնանպատակ պիտի չըլլայ:

Նախիջեւանին կապող ճանապարհ եւս պիտի չըլլայ ըստ անոր, խորհրդային տարիներուն ալ չէ եղած. «Հայաստանը Նախիջեւան գնացող ճանապարհը հարկ էլ բացում ա, Հայաստանը խնդիր չունի, իրենք յատուկ ուզում են Մեղրիով ճանապարհ կառուցեն, հաղորդակցութիւն բացել չի նշանակում, ինքը քեզ թելադրում է իր տարածքում քեզ համար ճանապարհ կառուցել: Ես դա անհաւանական եմ համարում: Ատրպէյճանը պատճառ է ման գալիս, որ այդ

Սիրողյեան Եւ Լաւրով Քննարկած ԵՆ

Սամուէլ Բաբայեան չեն սարքում, մենք ճանապարհները չենք բացում»:

Սամուէլ Բաբայեան ըսաւ, որ նոյնիսկ բացուելու պարագային Հայաստանի անվտանգութեան վտանգ չի սպառնար, վտանգը ուժեղ բանակ չունենալն է:

«Արցախի կարգավիճակը... չի կարող ռուսական զօրքերը դուրս բերուեն, մինչեւ յստակ խնդիր չեն լուծում», - ըսաւ ՊԲ նախկին հրամանատարը՝ աւելցնելով, որ բացի այդ, կարեւոր է Արցախի հզօրացումը՝ տնտեսապէս, ընկերային գետնի վրայ, Հայաստանի հետ կապող ճանապարհ ունենալ եւ այլն:

Հարցին, թէ ի՞նչ պիտի ըլլայ, երբ 4 տարի յետոյ ռուս խաղաղապահ ծառայութիւնը աւարտէ իր առաքելութիւնը եւ անոնց տեղակայման պայմանագրի ժամկէտը չերկարաձգուի, Բաբայեան արձագանգեց. «Պարտաւոր ենք ունենալ մենք այդ հօր բանակն Արցախում, ու մեր խնդիրները մենք լուծենք: Հնարաւոր է կարճ ժամանակ արհեստավարժ բանակ ունենալ: Մենք պէտք է կարողանանք մեր մէջ ուժ գտնել ստեղծել»:

«Պատերազմի ժամանակ ոչ վստահել են ինձ, որ ես ղեկավարեմ բանակը...»:

Սամուէլ Բաբայեան նշեց, որ Արցախի մէջ 20-21 տարի չէ եղած, բացի այդ, ասիկա իր սեփականութիւնը չէր, որ միայն ինքը որոշեր ինչպէս զարգացնել: Ի պատասխան հարցադրման, թէ հիմա, երբ պատերազմը աւարտած է, հեշտ է խօսիլ սխալներու մասին, ան ըսաւ. «21 տարի թալանած Դաշնակցութիւն, ԱԺԿ, ՊՊՇ, ինչքան կայ, հիմա մեղադրում են ինձ, ասում են, որ 3 ամսում դու պէտք է անէիր: Էսօր խօսում էք ձեզ ղեկավարող 21 տարին, ովքեր ձեզ բերել են էս օրուան, իրենց հերոսացրել էք, պարոն Բաբայեանը մեղաւոր է: Ես չեմ ընկալում՝ ինչ են ասում, ես ամէն ինչ արել եմ, որ ինչ-որ մի բան փոխուի այդ 3 ամսում»:

Սիրողյեան Եւ Լաւրով Քննարկած ԵՆ

Շարունակուած էջ 1-էն

խաղրային եւ տնտեսական բոլոր կապերու ապաշրջափակման, տարածաշրջանային համագործակցութեան համար բարենպաստ մթնոլորտ ստեղծելու վերաբերեալ հարցերու շուրջ:

Ընդգծուած է Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ սահմանային միջադէպերու քաղաքական եւ դիւանագիտական կարգաւորման ուղղուած ջանքերու շարունակա-

կանութեան կարեւորութիւնը: Անդրադարձ կատարուած է հայ-ռուսական համագործակցութեան արդիական գործօններուն՝ հաշուի առնելով տարբեր մակարդակներով առաջիկայ երկկողմանի շփումները: Երկու երկիրներու ԱԳ ղեկավարները փաստած են դաշնակցային համագործակցութեան առաջանցիկ գործացումը: Անոնք քննարկած են նաեւ միջազգային եւ տարածաշրջանային տարբեր հարցեր:

Գորիս-Կապան ճանապարհը Մեր ճանապարհին է՝ Բացառութեամբ Երկու Ջատուածի, Որ Վիճարկուող Է. Սանոսեան

«Մինչեւ այս շաբաթուայ վերջ հնարաւոր է աւարտել Գորիս-Կապան ճանապարհի այլընտրանքը համարուող Տաթեւ-Աղվանի 43 քիլոմետրանոց ճանապարհի վերանորոգումը»: Այս մասին Նոյեմբեր 2-ի լրագրողներու հետ ձեպագրուցի ընթացքին յայտարարեց Տարածքային կառավարման եւ ենթակառուցուածքներու նախարար՝ Գնել Սանոսեան՝ մանրամասնելով, թէ վերջին մէկ քիլոմետրը մնացած է, որ կուպրապատուի. - «Հենց եղանակային պայմաններ ունենանք, նոյնիսկ կարող ա էս շաբաթուայ մէջ աւարտենք»:



Տարածքային կառավարման եւ ենթակառուցուածքներու նախարար՝ Գնել Սանոսեան

Սեպտեմբերին, երբ Հայաստանի հարաւոր Գորիս-Կապան ճանապարհի՝ ատրպէյճանական վերահսկողութեան տակ գտնուող հատուածին ատրպէյճանցիները սկսան կանգնեցնել ու քանի մը հարիւր տոլարի հասնող ճանապարհային տուրք պահանջել իրանցի բեռնափոխադրողներէն, Հայաստանի իշխանութիւնները յայտարարեցին, որ արագ կը բարեկարգեն այլընտրանքային հողային ճանապարհը: Պարբերական հանդիպումներ սկսան իրանցի պաշտօնեաններու հետ, որոնք Հայաստանի իշխանութիւններուն այս հարցով աջակցելու պատրաստակամութիւն յայտնեցին: Բայց այլընտրանքային այս ճանապարհը եւս խնդիրներ կ'առաջացնէ իրանցի բեռնափոխադրողներուն համար:

Տաթեւի ոլորաններու հատուածը դժուար անցանելի է, ընդունեց նախարարը. - «Տաթեւի ձորում երեք ոլորան կայ, որտեղ դժուարութեամբ են մեծ բեռնատարները պտտուում, բայց ոչ անհնար, այսինքն՝ կարող են անցնել: Եւ այդ խնդիրը հաշուի առնելով, որպէսզի այդ խնդիրը չլինի, մենք Տաթեւից Լձեն ճանապարհի կառուցման ծրագիրն ենք հիմա իրականացնում: Այս պահին երկու ընկերութիւն այդ տասնինը քիլոմետր հատուածում աշխատում են

տարբեր կողմերից, որպէսզի արագ իրականացուի: Այս տարի հողային մասը կ'անենք, բայց կուպրապատման աշխատանքները կը մնայ 22 թուականին»:

Այլընտրանքային ճանապարհին այլընտրանք հանդիսացող մէկ այլ ճանապարհի կառուցումը դեռ չի նշանակեր, որ իշխանութիւնները այլեւս յոյս չեն կապեր Ատրպէյճանի վերահսկողութեան տակ անցած Գորիս - Կապան ճանապարհի 21 քիլոմետրանոց հատուածի հետ: Ամէն ինչ կ'որոշէ սահմանազատումն ու սահմանագծումը ըսած է նախարարը. - «Մենք այդ ճանապարհից ձեռք չենք քաշելու, այդ ճանապարհը մեր ճանապարհն է՝ բացառութեամբ երկու հատուածի, որ վիճարկուող է: Այսինքն՝ դեռ սահմանազատում, սահմանագծում երեւոյթը ցոյց կու տայ էդպէս է թէ չէ: Էդ գործընթացում կը լինեն ցաւոտ հատուածներ թէ ինչ, բայց որ յտակեցման կարիք կայ, կարծում եմ, համաձայն էք: Ձի կարող անընդհատ սահմանում ինչ-որ... որեւէ մէկը վեր կենալ ասել՝ սա մերն է, սա նրանն է եւ, ձեր ասածի նման, ինչ-որ մէկի մեքենային էլ նոյնիսկ հարուածել: Դա չի կարող անվերջ շարունակուել»:

ՍԴՅԿ-ի Հանդիպումը

Շարունակուած էջ 1-էն

Ան կարեւորեց Հայաստանի կառավարութեան տրամադրած օժանդակութիւնները եւ «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի միջոցաւ իրականացուող ծրագիրները Արցախի տարածքին:

Հնչակեան պատուիրակութիւնը գնահատեց պետական նախարարի հրապարակային ելոյթները, որոնք ոգեւորութիւն կը յառաջացնեն ունկնդիրներուն մօտ ու կը նպաստեն պատերազմի հետեւանքով ժողովուրդի մօտ յառաջացած հոգեբանական վիճակի բա-

րելուման: ՄԴՀԿ անդամները պատրաստակամութիւն յայտնեցին շարունակելու համագործակցութիւնը Արցախի կառավարութեան հետ: Հանդիպումի ընթացքին անդրադարձ եղաւ նաեւ «Հայաստան» Հիմնադրամի տեղական վարչութեան առնչուող հարցերուն: ՄԴՀԿ պատուիրակութեան մաս կը կազմէին ընկերներ՝ Վազգէն Խոտանեան, Վարդան Քորոզլեան եւ Միհրան Խաչատուրեան: Հայաստանը Պէտք է Խօսի Թուրքիոյ Հետ, Այլընտրանք Չկայ. Մարուքեան

Անգարա Պատրաստ Է Ընդառաջել

Շարունակուած էջ 1-էն

ի եթերով խօսած է նաեւ հայ-թրքական յարաբերութիւններու ապագայի մասին: Չաւուշօղլուն նշած է, որ վերջին այցի ժամանակ ատրպէյճանցի պաշտօնակիրի ձէյհուն Պայրամովի եւ միւս գործընկերներու հետ քննարկած են տարածաշրջանային կայունութեան ու

համագործակցութեան ապահովման ուղղուած համատեղ քայլերը: «Պատերազմը աւարտած է եւ հիմա Ատրպէյճանի առաջարկի համաձայն կողմերու միջեւ խաղաղութեան պայմանագիր պէտք է ստորագրուի: Սակայն Հայաստանին այս հարցով դրական պատասխան դեռ չէ հնչած», - ընդգծած է Մեւլուժ Չաւուշօղլուն:

Արմէն Սարգսեան Կլասքոյի Մէջ Զրոյցներ Ունեցած Է Պայտընի, Մաքրոնի Եւ Այլ Երկիրներու Ղեկավարներու Հետ



Նախագահ Արմէն Սարգսեան Կլասքոյի մէջ կը զրուցէ ԱՄՆ-ի նախագահ՝ Ծօ Պայտընի հետ

Նախագահ Արմէն Սարգսեան Կլասքոյի մէջ կայացող կլիմայի հարցով միջազգային գաղթնաթողովի ծիրէն ներս գրոյցներ ունեցած է ԱՄՆ-ի նախագահ՝ Ծօ Պայտընի, Ֆրանսայի նախագահ՝ Էմմանուէլ Մաքրոնի եւ Գերմանիոյ վարչապետ՝ Անկելա Մերքելի հետ: Ըստ Հայաստանի նախագահի գրասենեակին՝ Արմէն Սարգսեան զրուցած է նաեւ Մոնաքոյի արքայազն՝ Ալբերթ Երկրորդի, Քաթարի էմիր՝ շէյխ Թամիմ պըն Համատ Ալ Թանիի, Եգիպտոսի նախագահ Աբաւլ Ֆաթթահ Ալ Սիսիի, Սերպիոյ նախագահ՝ Ալեքսանդր Վուչիչի, Կիպրոսի նախագահ՝ Նիքոս

Անասթասիատիսի, Արժանթինի նախագահ՝ Ալպերթօ Ֆերնանտէսի, Մոնթենեգրոյի նախագահ՝ Միլօ Զոլեքանովիչի, Խրիզիստանի նախագահ՝ Սատիր Ժափարովի, Հնդկաստանի վարչապետ՝ Նարէնտրա Մոտիի, Իտալիոյ վարչապետ՝ Մարիօ Ծրակիի, Գանատայի վարչապետ՝ ձասթըն Թրիւտոյի, Աւստրալիոյ վարչապետ Սքոթ Մորիսոնի, Լիբանանի վարչապետ՝ Նեժիպ Միքաթիի, Լիւքսընպըրկի վարչապետ՝ Քաւէ Պեթլլի, Շուէտի վարչապետ՝ Սթեֆան Լիովընի, Աւստրիոյ վարչապետ Ալեքսանդր Շալենպըրկի, Եւրոպական խորհուրդի նախագահ՝ Շարլ Միշելի հետ:

Հայաստանի Մէջ Բացուած Է Սուրբ Աթոռի Առաքելական Նուիրակութիւն



Երեւանի մէջ տեղի ունեցած է Հայաստանի մօտ Սուրբ Աթոռի առաքելական նուիրակութեան բացման արարողութիւնը: «Արմէնի-րէս»-ի հաղորդմամբ՝ նուիրակութեան բացման արարողութիւնը կայացած է ՀՀ արտաքին գործոց նախարար՝ Արարատ Միրզոյեանի եւ Սուրբ Աթոռի պետական քարտուղարի ընդհանուր հարցերով փոխանորդ՝ Էտկար Փենիա Փառայի մասնակցութեամբ: Մինչ նուիրակութեան բաց-

ման արարողութեան Հայաստանի Արտաքին Գործոց նախարարն ու Սուրբ Աթոռի պետական քարտուղարի ընդհանուր հարցերով փոխանորդը հանդէս եկած են մամուլի համար յայտարարութիւններով, տեղի ունեցած է երկու նամականիշով նոր գեղաթերթիկի ներկայացումը «Հոռմի քահանայապետներու առաքելական այցերը Հայաստան. Ուխտագնացութիւն առաջին քրիստոնեայ երկիր» թեմայով:

Թուրքիոյ արտաքին գերատեսչութեան ղեկավարը նաեւ ըսած է, թէ պատրաստ են նաեւ

եռակողմ՝ Անգարա-Պաքու-Երեւանի ձեւաչափով քննարկել այս հարցը:

Միջազգային ԱՄՆի Նախագահ Պայտրն Առաջարկեց Իրանը Հեռու Պահել Պատժամիջոցներէն

«Լոս Անճելոս Թայմզ» օրաթերթի թղթակիցը Քրիս Մըկրեան Հոռոմէն կը տեղեկացնէ.

Հնարաւորութիւններ կան որ յառաջիկայ շաբաթներու ընթացքին բանակցութիւնները վերանորոգուին Իրանի հետ: Այս կապակցութեամբ, անցեալ շաբաթ, ԱՄՆ-ի նախագահ Պայտրն նշեց որ դռները կրնան բացուիլ Թեհրանի առջեւ, պատժամիջոցները վերացնելու, որպէս դիւանագիտական ռազմավարական ճիգեր, հիւլէական զէնքերու պատրաստութեան առաջին առնելու համար:

Արդարեւ, այս առաջարկը որդեգրուեցաւ իբրեւ մէկ մասը այն համաձայնութեան, որ միացեալ հաղորդագրութեամբ մը յայտարարուեցաւ Գերմանիոյ վարչապետ Անկելա Մէրքէլի, Բրիտանիոյ վարչապետ Պոլիս ճոնսոնի եւ Ֆրանսայի նախագահ Էմմանուէլ Մակրոնի հետ եղած հանդիպումէն ետք: Նշենք նաեւ որ չորս ղեկավարները՝ Հոռոմի մէջ մէկտեղուած էին G-20 միջազգային համաժողովի ծիրէն ներս, քննելու համար իրենց ռազմավարական գործարքը Իրանի հետ: Այս վերջինն արդէն ահազանգ հնչեցուցած էր, աւելցնելու իր միջուկային նիւթի հարստացումը:

Թերեւս դժուար պիտի ըլլայ կտրել, ամիսներէ ի վեր գոյութիւն ունեցող դիւանագիտական փակուղին: Պայտրն իր ազդանշանը տուած էր, որ չի փափաքիր այս հարցով յառաջ երթալ առանց Թեհրանէն ստանալու հաւաստի պարտաւորութիւններ:

Ղեկավարներն իրենց յայտարարութեան մէջ ըսած էին. «Այս մէկը կարելի կը դառնայ եթէ Իրան իր ընթացքը փոխէ»: Անոնք յորդորած էին Իրանի նոր նախագահ Իպրահիմ Ռայիսին, օգտուիլ այս պատեհութենէն եւ վերադառնալ բանակցութիւններուն, որպէս հրատապ գործ: Ասիկա միակ միջոցն է առաջին առնելու մագլցումի վտանգին, երեւոյթ մը որ ոչ մէկ ուրիշ երկիր չի հետաքրքրեր:

Պայտրն արշաւի մը սկսած է ուղղուած Իրանին, որպէսզի վերադառնայ հիւլէական համաձայնագրին, որ կնքուած էր նախագահ Օպամայի օրով 2015ին եւ լքուած նախագահ Թրամփի կողմէ, երեք տարիներ ետք: Ատկէ ի վեր ԱՄՆ-ը տնտեսական պատժամիջոցներու թիրախ դարձուցած էր Իրանը: Իսկ անոր փոխադարձած էր Իրանը, նոր թափ տալով իր հիւլէական ծրագիրներու կենսագործումին:

Ողջերթ Գերմանիոյ Վարչապետ Անկելա Մերքէլին

Գերմանիոյ վարչապետ եւ Եւրոպայի 16 տարիներու տնտեսութեան մեծ առաջնորդ Անկելա Մերքէլ, որոշած էր քաղաքական ասպարէզէն քաշուիլ եւ թեկնածութիւնը չի դնել յառաջիկայ ընտրութիւններուն: Ան իր վարած իւրայատուկ եւ ճկուն դիւանագիտութեամբ, կրցաւ իր երկիրը կառավարել ու բարուք դուրս գալ վտանգաւոր եւ տագնապալից վիճակներէն (տնտեսութիւն, գաղթականներու հարց եւ պահպանման ժահրի համավարակ, եւայլն): Ինք նոր ձեւ, կերպարանք եւ ուղղութիւն տուաւ Գերմանիոյ, որպէս չափաւորական քաղաքականութեան հետեւող տիպար կին անձնաւորութիւն:

Թէեւ վարչապետութենէն հրաժարած է, սակայն իրմէ խնդրուած է շարունակել այդ պաշտօնը որպէս վարչապետի գործակատար, մինչեւ



նոր վարչապետի մը նշանակումը: Մէրքէլի պատկանած քրիստոնեայ դոմեկրատ կուսակցութիւնը կը ծրագրէ պատշաճ ընդունելութեամբ մը ողջերթ մաղթել իր սիրելի ղեկավարին:

Գերմանիոյ, Եւրոպայի եւ բովանդակ Արեւմուտքի համար Մէրքէլի մեկնումը կը համարուի աւարտը քաղաքական դարաշրջանի մը:

Լարուածութիւնը Սաստակացած Ուքրանիոյ եւ Ռուսիոյ Միջեւ

Երկար ժամանկէ ի վեր, ուժեղ լարուածութիւն մը գոյութիւն ունի Ռուսաստանի դաշնութեան եւ Ուքրանիոյ միջեւ: Այդ լարուածութիւնն իր գագաթնակէտին հասնելով, ուքրանական սահմաններու արեւելեան շրջանի մէջ, հետզհետէ առաւել ակներեւ դարձած է ուու-

սական ոյժերու նոր կուտակումները: Այս բոլորը տեղի կ'ունենան այնպիսի շրջանին՝ երբ ռուսերը աւելի կարծր կեցուածք ցուցադրած են, քանի որ կը ծրագրուի ուքրանական հողերու վրայ ՆԱԹՕ-ի ենթակառուցներու ընդլայնում մը իրականացնել:

Տասնեակ Հազարաւորներու Բողոքի Ցոյցեր Սուտանի Մէջ


Գահիրէն ստացուած տեղեկութիւններու համաձայն՝ բովանդակ Սուտանի տարածքին, տասնեակ հազարաւորներու մասնակցութեամբ ցոյցեր տեղի ունեցան: Անոնք կը բողոքեն երկրէն ներս վերջերս տեղի ունեցած զինուորական պետական հարուածին դէմ: Արդարեւ, սոյն հակայական շարժումը կը նպատակադրէ վերջ տալ բանակի զորավարներու հակա-դեմոկրատական շարժումին: Գրեթէ ամէնօրեայ բողոքի ցոյցերուն մեծագոյնը՝ նախորդ շաբաթավերջին, Խարթումի մէջ տեղի ունեցածն էր, որուն պատճառով երեք հոգիներ մահացան եւ տասնեակ մը ցուցարարներ վիրաւորուեցան:

Իրերու այս կացութեան ներքեւ Ամերիկայի Միացեալ Նահանգներն ու ՄԱԿ-ը, խիստ ազդարարութիւններ կատարեցին պետական հարուածի պարագլուխ զորավար Ապտէլ Ֆաթթահ Պուրհանին եւ կոչ ուղղեցին զսպուածութիւն ցուցաբերել ցուցարարներու հանդէպ իրենց վարուելակերպին մէջ:

Միւս կողմէ Պուրհան, յայտարարութիւն մը կատարելով, նշեց որ ինք նախաձեռնած է կազմել փոխանցման շրջանի կառավարութեան մը: Խարթումի երկուորեակ Ուժտուրման քաղաքին մէջ ցուցարարներ կը վանկարկէին «հեռացիր Պուրհան» եւ «Յեղափոխութիւն, տեղափոխութիւն»... Իսկ պատաստներուն վրայ գրուած էր «եա դառնալն անկարելի է» վերտառութիւնը:

ՇՆՄՆԻՄ

Նախաձեռնութեամբ՝




Տօթթ. Արշակ Գագանճեան
ՄԵՐ ԴԻՏԱՆԿԻՒՆԷՆ
Ազգային Մտորումներ ու Կեցուածքներ

Գիրքը կը ներկայացնէ՝
Իրաւքան Ռուբէն Աւշարեան

«Տօթթ. Արշակ Գագանճեան այն հազուադէպ ազգային-հասարակական գործիչներէն է որ տասնամեակներու վրայ երկարող իր քաղաքական եւ գաղափարական աշխատանքները միշտ բնորոշուած են հաւասարակշուած կեցուածքներով եւ լուրջ ու չափաւոր արտայայտութիւններով:»

Հինգշաբթի, Նոյեմբեր 18, 2021
Երեկոյեան ժամը 7:30-ին

ՀԿԲՄ Կեդրոն
1060 North Allen Avenue, Pasadena, CA 91104



ՀՀ գլխավոր հիւպատոսարանին Սեջ Տեղի Ունեցաւ Ընդունելութիւն՝ Ի Պատիւ Արցախի Պետնախարար Արտակ Բեգլարեանին



Հոկտեմբերի 27-ին Լոս Անջելոսի ՀՀ գլխավոր հիւպատոսարանին մէջ տեղի ունեցաւ ընդունելութիւն՝ ի պատիւ Արցախի Հանրապետութեան պետական նախարար Արտակ Բեգլարեանին: Ընդունելութեան կը մասնակցէին Փալիֆորնիայի հայ համայնքի կրօնական, քաղաքական, հասարակական կառույցներու ղեկավարներ, համայնքային գործիչներ: Արցախի պետնախարարին հանդիպելու համար եկած էին նաեւ ամերիկացի ընտրովի պաշտօնեաներ՝ Փալիֆորնիայի նահանգային սենատորներ Էնթոնի Փորթմանթինոն, Մարիա Էլենա Դիւրագոն, Փալիֆորնիայի Ասամբլեայի անդամներ Ադրին Նազարեանը, Լորա Ֆրիդմընը, Լոս Անձելոսի քաղաքային խորհրդի անդամ Փոլ Գրիգորեանը, Լոս Անձելոսի մարզի կառավարիչներու խորհուրդի ներկայացուցիչներ: Լոս Անձելոսի ՀՀ գլխավոր հիւպատոս, դեսպան Արմէն Բայբուրդեանը հրաւիրեց Պարզեւ արքեպիսկոպոս Մարտիրոսեանը աղոթքով սկսելու ծրագիրը եւ ելոյթ ունենալու:

Ողջունելով հիւրերուն՝ դեսպան Բայբուրդեանը ընդգծեց Արցախի պետական նախարար Արտակ Բեգլարեանի այցի կարեւորութիւնը եւ նշեց, որ այն լաւ հնարաւորութիւն է՝ ծանօթանալու Արցախի ներկայ իրավիճակին, ապագայի ծրագիրներուն եւ նախանշելու գալիֆորնիահայտնութեան վերապահուած կարեւոր դերակատարութիւնը անոնց մէջ:

Արցախի պետնախարարը ամերիկահայ համայնքին ներկայացուց հինգ հենասիւնները, որոնց վրայ պէտք է կառուցուի Արցախի ապագան՝ կայուն անվտանգութիւն, աճող ժողովրդագրութիւն, զարգացող տնտեսութիւն, որակեալ կրթութիւն եւ արդիւնաւէտ կառավարում: Արտակ Բեգլարեանը խօսեցաւ այդ հինգ ուղղութեամբ կատարուելիք գործերուն եւ սփիւռքի հայութեան դերակատարութեան մասին:

Ելոյթներով հանդէս եկան Ամերիկայի Հայ Աւետարանական ընկերակցութեան (ԱՀԱԸ) գործադիր տնօրէն Զաւէն Խանձեանը, որ նաեւ հիւրընկալն էր

օրուայ ընդունելութեան՝ ՀՀ գլխավոր հիւպատոսի հետ միասին: Արցախի պետնախարարի աւագ խորհրդական Դաւիթ Յակոբեանը, ինչպէս նաեւ միջոցառման ներկայ ամերիկացի պաշտօնեաները, ինչպէս նաեւ Լոս Անձելոսի մարզի կառավարիչներու ներկայացուցիչները, որոնք ողջոյնի հաւաստագրեր յանձնեցին Արցախի Հանրապետութեան պետնախարարին եւ վստահեցուցին, որ կը շարունակեն կանգնած ըլլալ Արցախի ժողովրդի կողքին:

Միջոցառման աւարտին դեսպան Բայբուրդեանը արեւմտեան Ամերիկայի Հայ դատի յանձնախումբի գործադիր տնօրէն Արմէն Սահակեանին գնահատանքի հաւաստագիր յանձնեց երկար տարիներու բեղմնաւոր գործունէութեան եւ գլխավոր հիւպատոսութեան հետ արդիւնաւէտ գործակցելու, ինչպէս նաեւ Լոս Անձելոսի մէջ իր առաքելութիւնը աւարտելու եւ Հայաստան տեղափոխուելու առիթով:

Ռոբերտ Քոչարեանն ու Սերժ Սարգսեանը

Շարունակուած էջ 2-էն

լիսում Քոչարեանն այնքան առաջանցաւ, որ Ռուսաստանի կեցուածքն արդարացրեց մի այնպիսի դաշտում, որ ամենաշատն է պէտք քննադատել ու պահանջել: Քոչարեանը ոչ աւել, ոչ պակաս ասաց, թէ «Ռուսաստանը հաշուի է նստելու Ատրպէյջանի մեծացած դերակատարութեան հետ տարածաշրջանում, ստիպուած է լինելու»:

Այսինքն, իր իշխանավարման 10 տարիներին Ռուսաստանին տարբեր ռազմավարական օբիեկտներ՝ «Գոյք պարտքի դիմաց» գործարքի շրջանակներում յանձնած Քոչարեանն, արձանագրում է, որ Հայաստանն այլեւս Ռուսաստանի ռազմավարական դաշնակիցը չէ: Քոչարեանն էլ է՞ համաձայն, որ Ռուսաստանը Հայաստանի կողքին է, քանի դեռ ինչ-որ բան կարելի է պոկել, իսկ երբ այլեւս ոչինչ չկայ պոկելու, ամէն ինչ իրենն է, արդէն ուժեղի կողքին է՝ թուրք-ատրպէյջանական շահերն են ընդգծուած սպասարկում:

Յետպատերազմեան շրջանում ռուսական ջանքերը չսեւացնելու, հայաստանեան ներքաղաքական կեանքը հանդարտ, ռուսական գծի մէջ պահելու առումով, Քոչարեանն իրենից ակնկալուելիքն իրականացնում է ըստ արժանուոյն: Բայց ոչ միայն դա: Քոչարեանի ծրագրի մաքսիմումն իրագործուած է՝ ԱԺ-ում խմբակցութեան առկայութեամբ նա լուծել է նաեւ նեղ անձնական խնդիր՝ իր դէմ քաղաքական հետապնդումների հաւանականութիւնը մինիմալիզացուած է:

Այս ամէնն արձանագրելով, հեռու ենք այն համոզումից, թէ Քոչարեանն ուղիղ ղեկավարում է կրեմլից: Ընդհակառակը, Փութինն իր քայլերով ցոյց է տուել անգամ, որ խուսափում է Քոչարեանի հետ հրապարակային հանդիպումներից: Քոչարեանի մի քանի մոսկովեան այցերից յետոյ յատուկ տեղեկատուութիւն էր տարածուում, որ Փու-

թինն ու Քոչարեանը շփուել են հեռախօսագրոցի ընթացքում, մի բան, որ տեխնոլոգիական զարգացման այս վերելքի դարում կարելի է անվտանգ իրականացնել, երբ Քոչարեանը նաեւ Հայաստանում է գտնուում: Պարզապէս, Քոչարեանը գիտի՝ ինչպէս պահի գիծ, որպէսզի ցանկացած ֆորս-մաժորի դէպքում՝ ունենայ հնարաւորութիւն:

Իրականում, Հոկտեմբերի 1-ին Սերժ Սարգսեանի արձանագրումը՝ «Իշխանութեան գալու մասին ընդհանրապէս պէտք չի մտածել», ինչ-որ առումով տեղաւորում էր այս տարուայ զարնանը Տէր-Պետրոսեանի՝ միանալ՝ «չհաւակնելով իշխանութեան նոր ձեւաւորուելիք համակարգում որեւէ պաշտօնի» բանաձեւին: Սակայն դա հակասել է Քոչարեանի ծրագրերին ու հիմա ասուում են ճշմարտութիւններ, որոնք դեռ զարնանն արդէն ակնյայտ էին ու արձանագրել էինք:

Ինչ վերաբերում է Քոչարեանի եւ Սարգսեանի թիմերին հաշտեցնելու «ծանր» բեռն իրենց ուսերին տանող համացանցային կոնտինգենտին, ապա նրանք բաւական ծիծաղելի իրավիճակում են յայտնուել: «Հաշտարարները» չեն ցանկանում տեսնել ակնյայտը, որ Քոչարեանն ու Սարգսեանն այս փուլում տարբեր օրակարգեր ունեն, հետեւաբար՝ քաղաքական դաշտը լցնել միաւորուելու արհեստական կոչերով, իսկապէս զաւելտալի է: Սակայն այդ «հաշտարարների» ֆինանսական «ագնիւ» մղումներն էլ լիովին հասկանալի են, իսկ շատերինը՝ նաեւ յայտնի:

Քաղաքական ակտիւութեան նոր փուլերով «շեֆերից» փող «կպցնելը», հայրենասիրական բոցաշունչ ելոյթներ ունենալը, հայրենիքի «ղարգով» տապալուելը՝ ֆէյսպուքի «լայի» կոճակ սեղմելով, ըստ ամենայնի, առանց «աշխատավարձի» անելն, այնքան էլ դիւրին չէ:

«ԱՌԱՒՕՏ»

Հ. Մ. Մ. - Ի 100 ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ

Կազմակերպութեամբ՝
Հ. Մ. Մ.-ի Վարչութեան

ԾԱՇԿԵՐՈՅԹ ՊԱՐԱՀԱՆԴԷՍ




ԿՆԵՐԳԷ
ԱՌՆՈ ՄԿՐՏՅԱՆ

Տեղի կ'ունենայ Ծաբաթ 6 Նոյեմբեր 2021-ին, երեկոյեան ժամը 8.00-էն սկսեալ,
Հ.Կ.Մ.-ի շքեղ սրահէն ներս,
1060 N. ALLEN AVE., PASADENA, CA 91104
Մուտքի նուէր՝ \$75
Տեղերը ապահովելու համար՝
Հեռ. 818-384-2987, կամ 818-324-0574

ՀԲԸՄ-ի Gennext Նախաձեռնութեան Շրջանակներում Մեկնարկում Է Մենթորութեան Ընդլայնուած Ծրագիրը Եւ Յայտերի Ընդունելութիւնը

Իրականացման 24-րդ տարում Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան (ՀԲԸՄ)՝ մեծ յաջողութեամբ պսակուած Generation Next (GenNext) Mentorships ծրագիրը առաջ է ընթանում այս փոփոխական ժամանակներում՝ ծառայելով Մեծ Լոս Անջելեսի եւ Կլենտէյլի միացեալ կրթաշրջանի տեղական հայ համայնքի երիտասարդութեանը: Նախաձեռնութիւնը վերջերս յայտարարել է իր սկզբնական ծրագրի ընդլայնուած հիբրիդային մոդելի մասին եւ խոստումնալից մենթորներին հրաւիրում է առանց յապաղելու դիմել այս անվճար եւ մշտապէս զարգացող ծրագրին:

Առնուազն մեք տարի շարունակ սովորողները իւրաքանչիւր ամիս ութ ժամ կը յատկացնեն ծրագրին եւ կմասնակցեն շաբաթական առերես մենթորային հանդիպումների եւ կօգտուեն ամէնամսեայ խմբային միջոցառումների նոր հնարաւորութիւններին:

Նոր եւ բարելաւուած առաջարկի շրջանակներում յաւելուել է հիմնաւոր խմբային միջոցառումների բաղադրիչ՝ ի լրումն դեռահասների եւ հոգածու կամաւորների միջեւ մենթոր-մենթի բովանդակալից փոխյարաբերութիւնի: Այս առերես շփումները ձեւաւորման ամէնաբուռն փուլում գտնուող երիտասարդներին թոյլ են տալիս ստանալ անհատական աջակցութիւն դրական դերային մոդելից, որը հանդէս է գալիս որպէս աջակցութեան կողմնակի աղբիւր եւ որպէս ընկեր, եւ այդ ամենը՝ ծնողի (ծնողների) համաձայնութեամբ, ինչպէս նաեւ ՀԲԸՄ Արեւմտեան շրջանային յանձնաժողովի եւ մենթորային գործերում մասնագիտացուած արտաքին անկախ կազմակերպութեան հսկողութեամբ: Փորձ ձեռք բերելու հետ մէկտեղ սովորողները կպարզեն, որ կարող են վստահութիւն ձեռք բերել եւ առաջադիմութիւն դրսեւորել ինչպէս ուսման, այնպէս էլ սոցիալական շփման հարցերում: Մենթորները բովանդակութիւն կստանան սեփական փորձը եւ գործ-

նական գիտելիքները կիսելուց եւ նրբանկատ մօտեցում կցուցաբերեն դեռահասների մաքառումներին՝ միաժամանակ տեղեկանալով նոր սերնդին յուզող խնդիրներին եւ վերջինիս հետաքրքրութիւններին:

Տարաբնոյթ խմբային միջոցառումների շրջանակներում կառաջարկուեն ինչպէս փափուկ, այնպէս էլ կոշտ հմտութիւնների կատարելագործման դասընթացներ, որոնք սովորողներին կուսուցանեն, թէ ինչ են իրենցից ներկայացնում դիմային աշխատանքը, բանակցութիւնները, առաջնորդութիւնը, ինքնակենսագրութիւն կազմելը, հրապարակային ելոյթները՝ ի թիւս հաջողութիւն ապահովող այլ կարեւոր միջոցներ: Բացի այդ, կարիերայի, հոգեկան առողջութեան, քաղաքացիական մասնակցութեան, ֆինանսական գրագիտութեան, բուսութեան կանխարգելման, վնասակար նիւթերի օգտագործման վերաբերեալ սեմինարներով անդրադարձ կարուի այդ հարցերին եւս: Մասնակիցները նաեւ կը ծանօթանան այնպիսի բնագաւառների ու մասնագիտութիւնների, որոնք կարող են հետաքրքրել նրանց՝ կեանքի ուղին հարթելու ճանապարհին. եւ այդ ամենը կը ներկայացնեն տեղի համայնքի այն անդամները, որոնք տուեալ բնագաւառում յաջողութեան են հասել:

Կրթական ծրագրերի ղեկավար Նարէ Աւագեանը ծրագրին միացել է այն ժամանակ, երբ ՔՈՎԻԴ-19-ի համաճարակը նոր էր ծանր հարուած հասցրել Քալիֆորնիա նահանգին՝ հարկադրելով դադարեցնել առերես կրթութիւնը եւ անցում կատարել վիրտուալ դասընթացների: Նա նշում է, թէ հեռավար շփումներին անցնելը ինչպէս է օգնել GenNext-ի գաղափարի յաջորդ փուլի ձեւաւորմանը:

«Համավարակը ոչ միայն ազդեցութիւն ունեցաւ արդեն իսկ այս կարեւորագոյն տարիք թեւակոխած բոլոր դեռահասների, այլեւ GenNext-ի պէս մենթորային ծրագրերում ներգրաւուածների կեանքի վրայ: Այդ պատճառով, վիրտուալ հարթակի անցնելը սկզբից հարցա-

կանի տակ դրուեց: Բարեբախտաբար, մենք յաղթահարեցինք բոլոր դժուարութիւնները եւ պարգեցինք, որ մենթորութեան արժէքաւորութիւնը, որի համար միջանաձայն շփումը կարեւորագոյն նշանակութիւն ունի, իրականում չի նսեմացում հեռավար շփումների պատճառով: Իրականում, ի յայտ բերուեցին բնորոշ մի շարք առաւելութիւններ, մասնաւորապէս, երբ խօսքը գնում է այն մասին, թէ ծնողներն ինչպէս են ազատուում իրենց երեխաներին GenNext-ի կենտրոն հասցնելու կամ մենթորի հետ հանդիպելու պարտականութիւնից: Այն նաեւ կամաւոր մենթորներին օգնում է ժամանակ խնայել, քանի որ վերջիններս ակնյայտօրէն խիստ զբաղուած են սեփական աշխատանքային գործունէութեամբ կամ ընտանեկան հարցերով: Այս տարբերակը մենթորին, մենթիին եւ ծնողին ձկուտութիւն է տրամադրում GenNext-ից օգտուելու հարցում՝ առանց մնացած կարեւոր գործերը հարցականի տակ դնելու»:

Ծրագրի նոր ղեկավար Յոլեր Ուքայեանը ամենալաւ ամփոփ ձեւակերպումն է տուել. «Երբ Քալի-

ֆորնիա վերաբացի իր դպրոցները, իսկ 12 տարեկանից բարձր երիտասարդների մեծ մասը ստանայ պատուաստումները, մենք GenNext-ի մեր հանրութեանը կառաջարկենք երկու աշխարհների ամենալաւ կողմերը՝ առերես շփումների հրաշքը, վիրտուալ շփումների յարմարաւէտութիւնը, ինչպէս նաեւ շփման՝ ձեզ ամենալարմար տարբերակն ընտրելու ազատութիւնը»:

Որպէս սկիզբ, ձեզ հետաքրքրող հարցի պատասխանը գտնելու համար այցելէք ՀԲԸՄ-ի GenNext կայքէջը, որտեղ մենթիներն ու մենթորները կարող են տեղեկանալ գրանցման եւ յայտերը ներկայացնելու կարգին: Կլենտէյլի միաւորուած դպրոցական կրթաշրջանի անձնակազմը կարող է միջին եւ աւագ դպրոցի սաներին ուղղորդել մասնակցելու GenNext-ին անվճար հիմունքներով՝ պարզապէս կայքէջում լրացնելով ձեւաթուղթը:

Այցելէ՛ք agbugennext.org կամ կապուէ՛ք Կրթական ծրագրերի ղեկավար Նարէ Աւագեանին՝ navagyan@agbu.org էլեկտրոնային փոստի հասցէով կամ (626) 794-7942 հեռախօսահամարով:

AGBU GENNEXT | MENTORSHIP

DO YOU HAVE CHILDREN WHO CAN BENEFIT FROM A PROFESSIONAL MENTOR?

1-ON-1 MENTORSHIP | GROUP ACTIVITIES

Apply Now

For middle and high school students

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly
Enclosed a check for (one year)
* \$50,00 * \$100,00 (first class) for USA
\$ 125,00 (Air Mail) for Canada.
\$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----
Address: -----
City: ----- State:----- Zip Code:-----
Country: -----
Tel:-----
Email: -----

Massis Weekly

Volume 41, No. 41

Saturday, NOVEMBER 6, 2021

Mirzoyan and Lavrov Discuss Regional Developments



YEREVAN—Armenian and Russian Foreign Ministers Ararat Mirzoyan and Sergey Lavrov have discussed the implementation of the agreements of the leaders of Armenia, Azerbaijan and Russia dated November 9, 2020 and January 11, 2021.

Ahead of the anniversary of the trilateral document on complete cessation of all hostilities in the Nagorno-Karabakh conflict zone, the parties paid special attention to advancing the solution of the urgent humanitarian issues, primarily the return of detainees, the transfer of maps of minefields and the preservation of cultural and religious heritage.

Reference was made to issues of

easing tensions on the Armenian-Azerbaijani border, unblocking all transport and economic ties in the South Caucasus, creating a favorable atmosphere for regional cooperation.

The importance of continuing the efforts aimed at the political-diplomatic settlement of the border incidents between Armenia and Azerbaijan was emphasized. The sides touched upon the current aspects of the Armenian-Russian cooperation, taking into account the forthcoming bilateral contacts at different levels. The Foreign Ministers of the two countries noted the progressive development of the allied cooperation. They also discussed various international and regional issues.

Bipartisan Letter Urges Biden to Refuse Sale of F-16 Jets to Turkey



WASHINGTON, DC -- Democratic and Republican U.S. lawmakers urged President Joe Biden's administration not to sell F-16 fighter jets to Turkey and said they were confident Congress would block any such exports.

In a letter to Biden and U.S. Secretary of State Antony Blinken, 11 members of the House of Representatives cited "a profound sense of concern" about recent reports that Turkey may purchase 40 new Lockheed Martin (LMT.N) F-16s and 80 F-16 modernization kits.

The letter dated Oct. 25 stated

"Following President (Tayyip) Erdogan's September announcement that Turkey will purchase an additional tranche of Russian S-400 missile defense systems, we cannot afford to compromise our national security by sending U.S.-manufactured aircraft to a treaty ally which continues to behave like an adversary."

Earlier this month Turkey had made a request to the United States to buy 40 Lockheed Martin-made F-16 fighter jets and nearly 80 modernization kits for its existing warplanes.

Continued on page 4

President Armen Sarkissian Attends COP26 Conference in Glasgow Meets With World Leaders



GLASGOW -- President Armen Sarkissian has attended the 26th Conference of the Parties to the United Nations Framework Convention on Climate Change (COP26) in Glasgow.

President Sarkissian was welcomed by and had a brief conversation with UK Prime Minister Boris Johnson and UN Secretary general Antonio Guterres

The United Kingdom and Italy co-chair the Glasgow Conference.

Heads of states, climate change experts, business and civil society leaders participated in the discussions.

The conference aims to develop

an agreed action plan for combating climate change. The agenda topics target to help communities prepare for the worst effects of climate change, to protect and restore natural habitats and ecosystems for the planet's biodiversity, to accelerate the transition to clean energy by promoting the use and storage of low-cost renewable sources, to clean the air by accelerating zero emissions transport use around the world, encourage and identify the developing of financial systems and create green jobs.

Continued on page 3

Ambassador Lilit Makunts Briefs US Lawmakers on Challenges Following 44-day War



WASHINGTON, DC -- Lilit Makunts, Ambassador of the Republic of Armenia to the United States, held a discussion-meeting with more than a dozen members of the Congressional Caucus on Armenian Issues, in the Capitol Hill.

Ambassador Makunts expressed her gratitude to the Members of Congress for their constant support to Armenia, the issues of concern to Armenian people, and for the adoption of pro-Armenian resolutions in Congress, in particular, the adoption of

resolutions on the recognition of the Armenian Genocide and condemnation of the aggression unleashed by Azerbaijan against the people of Artsakh.

Ambassador Makunts briefed Members of Congress on the democratic reform program implemented by the Armenian Government, agenda of the Armenian-American relations and current regional security issues. In that context, she emphasized the

Continued on page 3

Extra-Parliamentary Forces to Be Represented in The Commission Studying Circumstances Of 44-Day War



YEREVAN (Armradio)— Prime Minister Nikol Pashinyan held a meeting with representatives of extra-parliamentary forces.

Attending the meeting were leader of the Republic Party Aram Sargsyan, leader of the Liberal Party Samvel Babayan, representative of the Alliance Progressive Centrist Party Tigran Arzakantsyan, leader of the Fair Armenia Party Norayr Norikyan, leader of the Sovereign Armenia Party David Sanasaryan, leader of the European Party of Armenia Tigran Khzmalyan, leader of the Christian-Democratic Party of Armenia Levon Shirinyan, leader of the United Homeland Party Mher Terteryan, leader of the Conservative Party Mikael Hayrapetyan, Chairman of Social Democrat Hunchakian Party Setrak Ajemian.

"This is our fourth meeting of this scale, I think at the moment we can say that we are using it as a

platform for conversation. And the fact that we are here today is a proof of that, our next task should be to make this platform more effective, to crown its activities with concrete results. How successful it will be, depends on us. Of course, there are no guarantees, but that is our goal," PM Pashinyan said in his opening remarks.

"At the moment, we have a very specific decision that three representatives of this format should be involved in the commission investigating the circumstances of the 44-day war," said Prime Minister Pashinyan, emphasizing that solutions are currently being sought to organize the issue de jure. Nikol Pashinyan added that the work of the commission will start only after the preparatory work.

Then the participants of the sitting proceeded to the discussion of the issues on the agenda.

Armenia is Ready to Start the Process of Delimitation and Demarcation of Borders

YEREVAN -- There are no obstacles for Armenia to start the process of delimitation and demarcation of the border with Azerbaijan, Secretary of the Security Council Armen Grigoryan told journalists on Thursday.

"We announced that we are ready to start the process of delimitation and demarcation. We are waiting for a positive impulse from Azerbaijan," he said.

"We are also ready to start discussing concrete issues considered within the framework of the trilateral working group co-chaired by the Deputy Prime Ministers of Armenia, Russia and Azerbaijan," he stated.

"One of the approaches is that the armed forces of both Armenia and Azerbaijan withdraw from the line of contact and allow troops of the two countries to be re-deployed in the area before we can start the delimitation and demarcation process," the Secretary said.

When asked whether the demand that Azerbaijan withdraw its troops from Armenia could be a precondition for the start of the process, Grigoryan said he could not say why Azerbaijan did not yet begin the process of demarcation and delimitation.



Russian President Vladimir Putin said last week that his country can play a key role in helping Armenia and Azerbaijan to solve the problem of their borders. Speaking at a meeting of the Valdai discussion club in Sochi Putin said the problem could be solved only by Armenia, Azerbaijan with participation of Russia. He also said that Russia has the maps kept at the General Staff of the Russian army, which show how the borders between former Soviet Union republics ran.

Speaking on normalizing relations with Turkey, Grigoryan said Armenia is discussing with Russia on ways to move forward with this process.

Apostolic Nunciature of the Holy See Inaugurated in Armenia



